



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՀՈԿԱՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ

**ՓՐՈՖ. ՎԱՀՐԱՄ ՇԵՄՄԱՍԵԱՆ ԴԱՍԱԽՕՍԵՑ ՆԻԹ ՈՒՆԵՆԱԼՈՎ ՀԱԼԷՊԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՂԵՌՆԻ ԱՌԱՋԻՆ ԱՄԻՍՆԵՐՈՒՆ**

Չորեքշաբթի, 2 Մայիս, 2007-ի երեկոյեան, հովանաւորութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի, Կլէնտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ շահեկան եւ դաստիարակիչ դասախօսութիւն մը «Հալէպի Առաջնորդութիւնը Եղեռնի Առաջին Ամիսներուն» սիւթին շուրջ, տրուած՝ Փրոֆ. Վահրամ Շեմմասեանի կողմէ: Ներկայ էին աւելի քան հարիւր յիսուն հայորդիներ:

Այս ձեռնարկը տրամաբանական շարունակութիւնն էր անցեալ շաբթուան Ապրիլ 24-ի ձեռնարկներուն: Այս ձեռնարկը փաստային տուեալներու վրայ հիմնուած դասախօսական երեկոյ մըն էր, որ կը միտէր բնութագրել եւ լոյսին բերել Ազգ. Առաջնորդարանի կացութիւնն ու գործունեութիւնը Մեծ Եղեռնի առաջին ամիսներուն:

Երեկոյթը կազմակերպուած էր Կլէնտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հովիւներուն եւ հոգարաբժութեան կողմէ, նախաձեռնութեամբ Ազգային Առաջնորդարանի առաքելութեան տարածման յանձնախումբին, որ պարտականութիւնը ունի Ազգային Առաջնորդարանի գործունեութիւնը հանրութեան ներկայացնելու՝ Հայ Դատի եւ Հայ Մշակոյթի կապակցութեամբ իր հոգեւոր ծառայութեանց աշխատանքներուն ընդլայնումով, դրական հայանպաստ ձեռնարկներով եւ գործունեութեամբ, ընդհանրապէս, ի հեճուկս ժխտական կեցուածքներու:

Դասախօսն էր Փրոֆ. Դոկտ. Վահրամ Շեմմասեան, որ ծանօթ դէմք մըն է սփիւռքահայութեան՝ իր հայագիտական եւ պատմական նիւթերու շուրջ դասախօսութիւններով եւ գրութիւններով: Դոկտ. Շեմմասեանը, նոյնպէս, Լոս Անճըլըսի հայ վարժարաններու մէջ պաշտօնավարած է, եւ եղած տնօրէն՝ երեք վարժարաններու: Ան, ներկայիս, Նորթրիճի Նահանգային Համալսարանին մէջ դասախօս է եւ վարիչը՝ հայագիտական ամպիոնին:

Փրոֆ. Շեմմասեան, իբրեւ Մուսա Լեռնցի, իր գիտա-պատմական աշխատանքներուն եւ փնտռտուքներուն առանցքը



դարձուցած է պետական եւ ոչ-պետական արխիւները՝ Միացեալ Նահանգներու, Եւրոպայի, Միջին Արեւելքի եւ Հայաստանի մէջ, լոյսին բերելու համար Եղեռնի շարժառիթներն եւ անոր առընչուած Մուսա Լերան հերոսամարտի ծալքերը, երախտաշատ գործ կատարելով:

Յարգելի դասախօսը բեմ հրաւիրուելէ ետք, շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր եւ կազմակերպիչ մարմնին, իրենց ընծայած առիթին համար, եւ ապա իր կատարած պրպտումներուն եւ ուսումնասիրութիւններուն վրայ հիմնուելով, կրցաւ լաւագոյնս ներկայացնել Հալէպի Ազգ. Առաջնորդարանին տարած հսկայական այն աշխատանքը որ, դժնդակ պայմաններու տակ, կրցաւ պահել ժողովուրդ մը ամբողջ, կազմակերպելով եւ կեանքի կոչելով զանազան յանձնախումբեր եւ ենթայանձնախումբեր, նախաձեռնութեամբ եւ գլխաւորութեամբ Կիլիկիոյ դարաւոր Ս. Աթոռի տարաբախտ գահակալին՝ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսի, մեր ժողովուրդին խլեակները մէկտեղելու եւ անոնց կեանքի ապահովութեան պայմաններ ստեղծելու մարզին մէջ:

Օրուան հանդիսավառն եր եկեղեցւոյ հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան: Յայտագրին երգով իրենց մասնակցութիւնը բերին, Պրն. Միսաք Գայսերեան եւ Տիկ. Հերմինէ Ամիրեան, դաշնակի ընկերակցութեամբ Տիկ. Արմէնուհի Տերտերեանին եւ Յովիկ Զեօշկերեան, որ դաշնակի վրայ նուագով հանդես եկաւ:



Փակման խօսքը կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը, առաջին հերթին գնահատելով երեկոյթի կազմակերպիչները, յայտագրին մասնակցողներն ու ինչպէս նաեւ ներկայ ժողովուրդը, որոնք իրենց ներկայութեամբ միշտ քաջալեր հանդիսացած են Ազգ. Առաջնորդարանի կողմէ կազմակերպուած ձեռնարկներուն:

Ապա, բարձրօրէն գնահատեց օրուան բանախօսը՝ Դոկտ. Վահրամ Շեմմասեանը, իր բժախնդիր եւ մանրակրկիտ ըննութիւններու արդիւնք եղող շահեկան դասախօսութեան համար, ինչպէս նաեւ անոր Ազգ. Առաջնորդարանին հետ միշտ գործակցելու պատրաստակամութիւնը:

Առաջնորդ Սրբազան Հայրը օրինեց յիշատակը բոլոր անոնց, որոնք խղճմտօրէն հասան մեր ժողովուրդի ծով կարիքներուն, յատկապէս ջարդի յաջորդող ամիսներուն ու տարիներուն, որպէսզի մեր ժողովուրդը կարենայ կապուիլ յոյսին ու կեանքին եւ ունենայ լոյսի նոր ու հզօր հայրենիք:

Երեկոյթը իր աւարտին հասաւ Առաջնորդ Սրբ. Հօր «Պահպանիչ»ով եւ ներկաներու կողմէ «Կիլիկիա»ի երգեցողութեամբ, որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Վազգէն Զինյ. Աթմաճեան

UNDER THE AUSPICES OF THE PRELATE

## **PROF. VAHRAM SHEMMASSIAN LECTURES ON THE HUMANITARIAN MISSION OF THE ALEPPO PRELACY DURING THE GENOCIDE**

On the evening of Wednesday, May 2<sup>nd</sup>, a lecture presentation took place at “Armenak Der Bedrossian” hall of St. Mary’s Church in Glendale under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and initiated by the Western Prelacy Outreach Committee. The lecture, which was organized by St. Mary’s Pastors and Board of Trustees, featured Prof. Vahram Shemmassian lecturing on the topic “The Armenian Prelacy of Aleppo during the first months of the Genocide”.

The event was in a way a continuation of Genocide commemoration events that took place a week earlier, though it was not a typical commemorative event but rather a presentation of research finding with regards to the humanitarian service of the Prelacy of Aleppo during the first months of the Genocide.

The evening began with a collective prayer and welcoming remarks by MC Rev. Vazken Atmajian, followed by a musical performance by Misak Kayersian. Before beginning his lecture Prof. Shemmassian thanked the Prelate and the organizing committees for offering him the opportunity to present his findings. In his lecture he detailed the assistance given to survivors of the Genocide by H.H. Catholicos Sahag Khabaian of blessed memory and the Aleppo Prelacy which established numerous committees and subcommittees for this noble purpose.

Following the lecture and question and answer session the artistic program continued with a performance on the piano by Hovig Keushgerian and song selections by Hermine Amirian and Misak Kayserian accompanied by Armenouhi Derderian on the piano.

Closing remarks were delivered the Prelate who firstly commended the evening’s organizers, the participants in the artistic program, and those in attendance who with their participation time and time again demonstrate their support in the Prelacy. The Prelate then commended Prof. Shemmassian for his meticulous research and for his readiness to work in partnership with the Prelacy.

The Prelate in conclusion blessed the memory of all those who selflessly devoted their time and efforts to providing for the needs of their brethren in such a dire time.

The evening came to a close with a benediction by the Prelate and the collective singing of “Giligia”.